ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՊՄՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 5.09. 2022Թ. ԹԻՎ 8 ՆԻՍՏՈՒՄ
ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԳ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ (ՀՊՄՀ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԱՐՏՈՆՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՊՄՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը (այսուհետ՝ կարգ) կանոնակարգում է բակալավրի և մագիստրոսի պատրաստման համար կրթական ծրագրերի մշակման և արտոնման գործընթացը, որը բաղկացած է հետևյալ փուլերից՝

- կրթական նոր ծրագրի մշակման գործընթացի նախնական արտոնում,
- ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծում և փորձաքննություն,
- փորձաքննության արդյունքների վերլուծում և ծրագրի հաստատում:

1.2. Սույն կարգը սահմանում է ՀՊՄՀ կրթական ծրագրերի արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացների նպատակները և առաջադիր խնդիրները, դրանց ներկայացվող պահանջները, կիրառվող ընթացակարգերը, համապատասխան ժամանակացույցները:

1.3. Կարգում սահմանվում են նաև նոր կրթական ծրագրի մշակման հայտի ձևանմուշները և ծրագրի արտոնման փաստաթղթային փաթեթի կազմը:

1.4. Նոր կրթական ծրագրի արտոնման փաստաթղթային փաթեթը, համապատասխան իրավական գործընթացներից հետո ներկայացվում է լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանում՝ լիցենզավորման (Հավելված 2):

1.5. Նոր կրթական ծրագրերի մշակման առաջարկները ներկայացնում են Համալսարանի ուսումնական ստորաբաժանումները (ինստիտուտ, ֆակուլտետ, ամբիոն, կենտրոն)՝ վերջինիս հաստատումից առնվազն 8 ամիս առաջ,

1.6. ՀՊՄՀ բակալավրի և մագիստրոսի նոր ստեղծվող կրթական բոլոր ծրագրերը պետք է անցնեն հաստատման գործընթաց:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐՏՈՆՈՒՄԸ

2.1. Կրթական ծրագրերի մշակման արտոնումը Համալսարանի պաշտոնական համաձայնությունն է ուսումնական ստորաբաժանմանը՝ ձեռնարկելու նոր կրթական ծրագրի մշակման գործընթացը՝ ներկայացված հայտի համաձայն:

2.2. Արտոնման գործընթացի նպատակն է գնահատել ներկայացված ծրագրի հայտի հիմնավորումը և դրա համապատասխանությունը կրթական ծրագրերին ներկայացվող պահանջներին և Համալսարանի առաքելությանը:

2.3. Գործընթացի խնդիրներն են.

- պարզել տվյալ կրթական ծրագրի իրականացման նպատակահարմարությունը շուկայական վերլուծության միջոցով, հիմնավորել առաջարկվող կրթական ծրագրի պահանջարկվածությունը տեղական և միջազգային աշխատաշուկայում, բացահայտել ծրագրի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը ՀՀ այլ բուհերում իրականացվող համանման ծրագրերի նկատմամբ (եթե այդպիսիք կան),
- հիմնավորել, որ առաջարկվող կրթական ծրագիրը նպատակահարմար է իրականացնել տվյալ ուսումնական ստորաբաժանումում, վերլուծել առաջարկության իրագործելիությունը ծրագրային թիմի՝ ծրագիրը մշակելու փորձագիտական կարողության տեսանկյունից,
- տալ առաջարկվող կրթական ծրագրի ռեսուրսային ապահովվածության նախնական գնահատականը և բացահայտել լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտությունը:

2.4. Նոր կրթական ծրագիր մշակելու առաջարկությունը ներկայացնում է համապատասխան ստորաբաժանումը՝ կրթական ծրագրերի մշակման պահանջներին և ծրագրի առաջարկի հայտի ձևաանմուշին համապատասխան: Ծրագրի մշակման առաջարկությունն արտոնման է ներկայացվում ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ՝ ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման հանձնախմբի (ՖՈԱՀ) դրական եզրակացության հիման վրա:

2.5. Առաջարկության մշակման և հետագա իրականացման համար համապատասխան ստորաբաժանում(ներ)ը ձևավորում է (են) աշխատանքային խումբ, որը ձևակերպում է ծրագրի առաջարկի հայտը՝ ըստ սահմանված ձևանմուշի:

2.6. Ծրագրի առաջարկի մշակման համար կարող են հիմք հանդիսանան.

- Համապատասխան ստորաբաժանման ռազմավարական գերակայությունները,

- աշխատաշուկայի և գործատուների պահանջների ու կարիքների վերլուծությունը, նպատակային ուսուցման հնարավորությունները,
- առաջարկվող ծրագրի մրցակցային դիրքը (առավելություններն ու թույլ կողմերը) ՀՀ այլ բուհերում իրականացվող համանման այլ ծրագրերի նկատմամբ (եթե այդպիսիք կան),
- ազգային և միջազգային ծրագրային կողմնորոշիչների (որակավորումների ազգային և եվրոպական շրջանակների) և կամ կրթական չափորոշիչների պահանջները տվյալ մասնագիտության համար,
- ուսումնական ստորաբաժանումում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դասախոսական, նյութական, տեղեկատվական և այլ ռեսուրսների առկայությունը և այլն:

3. Նոր կրթական ծրագրի մշակման աշխատանքային խմբի գործունեությունը

3.1. Նոր կրթական ծրագիր կազմելու համար տվյալ ուսումնական ստորաբաժանումը ստեղծում է ծրագրի մշակման աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվում են փորձառու դասախոսներ, գործատուներ, ծրագրի մասնագիտական ոլորտից, կրթության որակի ապահովման փորձագետներ, և այլ մասնագետներ՝ ըստ նպատակահարմարության: Աշխատանքային խմբի աշխատանքները համակարգում է կրթական ծրագրի ղեկավարը (ստորաբաժանման ղեկավարը)

3.2. Միջմասնագիտական կրթական ծրագրերի ստեղծման դեպքում ստորաբաժանումներից մեկի ղեկավարը պատասխանատվություն է ստանձնում ծրագրի մշակման և հետագա իրականացման համար: Այդ ստորաբաժանման ղեկավարը (ֆակուլ-տետի դեկանը, կենտրոնի տնօրենը, ամբիոնի վարիչը), խորհրդակցելով ծրագրին մասնակցող մյուս ստորաբաժանումների ղեկավարների հետ, նշանակում է աշխատանքային խմբի ղեկավարին և անդամներին:

3.3. Նոր կրթական ծրագրի մշակման աշխատանքային խումբը պատասխանատու է ծրագրի առաջարկի հայտի ձևակերպման, ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի ստեղծման և փորձաքննության եզրակացությունների կատարմանը հետամուտ լինելու համար:

3.4. Համալսարանի որակի ապահովման բաժինը (ՈԱԲ) անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում ծրագրի արտոնման և հաստատման համար պահանջվող փաստաթղթերի

ցանկի, դրանց բովանդակության և նախապատրաստման վերաբերյալ:

4. Կրթական նոր ծրագրի արտոնման գործընթացի ալգորիթմը

4.1. Արտոնման գործընթացի առաջին քայլը ծրագրի առաջարկի հայտի ձևակերպումն է աշխատանքային խմբի կողմից: (Տե՛ս հավելված 1-ում)

4.2. Առաջարկի հայտը նախապես հաստատվում է առաջարկող ուսումնական ստորաբաժանման կողմից (ամբիոն, ֆակուլտետ, կենտրոն, ինստիտուտ), իսկ միջմասնագիտական ծրագրի դեպքում՝ ստանում մասնակից ստորաբաժանումների ղեկավարների համաձայնությունը և ներկայացվում ՈԱԲ: Վերջինս ստուգում է հայտի համապատասխանությունը սահմանված պահանջներին և ներկայացնում այն ուսումնական գործընթացների կառավարման վարչությանը և ուսումնական/ակադեմիական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնմանը:

4.3. Երկու կամ ավելի ուսումնական ստորաբաժանումների՝ միջմասնագիտական կրթական ծրագրի մշակման վերաբերյալ առաջարկը արտոնման է ներկայացվում ծրագրի մշակման համար պատասխանատվություն ստանձնած ուսումնական ստորաբաժանման գիտական խորհրդի որոշմամբ:

4.4. Առաջարկվող կրթական ծրագրի մշակումն արտոնելու վերաբերյալ եզրակացությունը տալիս է ուսումնական/ակադեմիական աշխատանքների գծով պրոռեկտորը: Արտոնման վերաբերյալ եզրակացությունը կարող է լինել դրական, պայմանական դրական (որոշակի թերությունների շտկման պայմանով) և բացասական:

4.5. Կրթական նոր ծրագրի մշակման աշխատանքային խումբն ուսումնասիրում է արտոնման եզրակացությունը և միջոցներ ձեռնարկում այնտեղ նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ:

4.6. Ուսումնական/ակադեմիական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատում ստանալուց հետո համապատասխան ուսումնական ստորաբաժանումը (ֆակուլտետը, կենտրոնը) և ՈԱԲ-ը կազմում են ծրագրի հաստատման հետագա գործընթացի ժամանակացույցը:

4.7. Նորաստեղծ ծրագիրն արտոնելու վերաբերյալ դրական որոշումը հիմք է հանդիսանում Համալսարանի կողմից տվյալ ծրագրի լիցենզավորման դիմելու:

5. Կրթական նոր ծրագրի փորձաքննության իրականացումը և հաստատումը

5.1. Կրթական ծրագրերի փորձաքննության նպատակն է

- գնահատել ծրագրի մշակման որակը,
- գնահատել մշակված ծրագրի վերջնարդյունքների և ուսումնական պլանի բովանդակության համապատասխանությունը ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին,
- հավանություն տալ ծրագրի բաղկացուցիչ դասընթացների (կրթական մոդուլների) կազմին և բովանդակությանը, հավաստիանալ, որ դրանց կրթական վերջնարդյունքները համապատասխանում են ծրագրի որակավորմանը,
- համոզվել, որ ծրագրի մշակման արտոնման վերաբերյալ եզրակացությունում նշված թերությունները հիմնականում վերացված են,
- հավաստիանալ, որ տվյալ ուսումնական ստորաբաժանումն (ստորաբաժանումները) ունակ է (են) իրականացնելու մշակված ծրագիրը՝ սահմանված կրթական չափորոշիչներին և մատուցման որակի պահանջներին համապատասխան,
- գնահատել նորաստեղծ կրթական ծրագրի և դրա բաղկացուցիչ դասընթացների (կրթական մոդուլների) իրականացման ռեսուրսային բազայի և ուսումնական ենթակառուցվածքի համապատասխանությունը սահմանված նորմատիվային պահանջներին:

5.2. Կրթական ծրագրի հաստատման համար անհրաժեշտ է

- կրթական նոր ծրագրի արտոնման եզրակացությունը՝ համապատասխան դիտողություններով և բարելավման առաջարկություններով,
- կրթական նոր ծրագրի մասնագիրը հաստատված ձևաչափով՝ ներառյալ ուսումնական պլանը, տվյալներ լսարանային հագեցվածության, մասնագիտական գրականության առկայության, պրոֆեսորադասախոսական անձնակազմի առկայության մասին,
- փորձաքննության եզրակացությունը և պոտենցիալ գործատուների կարծիքները (եթե այդպիսիք կլինեն):

5.3. ՈԱԲ-ը պատասխանատու է ծրագրի փորձաքննական գործընթացների կազմակերպման համար՝ ձևավորելով հանձնաժողով, որը քննարկելու է նոր կրթական ծրագրի առաջարկը, փաստաթղթային հենքը և տալիս եզրակացություն:

5.4. Հանձնաժողովի կազմը որոշելիս հաշվի են առնվում ծրագրի բնույթը և նպատակները, մասնագիտական ոլորտը և այլ հանգամանքներ, որոնք կարևոր են ծրագրի առաջարկը օբյեկտիվ և համակողմանի գնահատելու համար:

5.5. Կրթական նոր ծրագրի փորձաքննության հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անձից, որոնցից առնվազն երկուսը արտաքին շահակիցներ են, երկուսը՝ դասախոսական կազմի ներկայացուցիչներ տվյալ ծրագրի մասնագիտական ոլորտից:

5.6. Հանձնաժողովի կազմը համաձայնեցվում է Վարչության հետ և հրամանագրվում ռեկտորի կողմից: Հրամանում նշվում են նաև հանձնաժողովի աշխատանքի ժամկետները:

Հավելված 1.

Հաստատում եմ

«__xx__»___xx____20xxթ.

ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ս. Գևորգյան

_____

ՀՊՄՀ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՅՏ

1. Բակալավրի կրթական ծրագրի մասին ընդհանուր տեղեկատվություն

Ֆակուլտետ՝

Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը՝

Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)՝

2. Ընդունելության չափաքանակները և պայմանները

3. Նոր ծրագրի ներմուծման հիմնավորումը

Ամփոփ ներկայացնել նոր կրթական ծրագրի ներդրման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը: Պարզաբանել նաև, թե ծրագրի ներդնումը որքանո՞վ կնպաստի համալսարանի առաքելության և հիմնական նպատակների իրականացմանը:

4. Աշխատաշուկայի վերլուծություն

Ներկայացնել տվյալներ (պոտենցիալ գործատուների, մասնագետների ու շահագրգիռ կառույցների կարծիքներ, վիճակագրական և այլ առկա նյութեր) առաջարկվող կրթական ծրագրի ուղղությամբ աշխատաշուկայի պահանջարկի վերաբերյալ:

5. Ծրագրի նպատակները և կրթական վերջնարդյունքները

Թվարկել նոր կրթական ծրագրի հիմնական նպատակները և այն ակնկալվող կրթական վերջնարդյունքները, որոնք ձեռք կբերեն ուսանողները ծրագրի ավարտին:

6. Ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը

Ներկայացնել կրթական նոր ծրագրի հիմնական ուսումնական մոդուլները/դասընթացները և դրանց հատկացված կրեդիտները, մոդուլների/դասընթացների բաշխումն ըստ կիսամյակների և այլն: Ներկայացնել ուսումնական պլանի նախագիծը:

7. Ծրագրի առանձնահատկությունները

Նշել կրթական ծրագրի առանձնահատկությունները, դասավանդման և ուսումնառության նորարարական եղանակները կամ միջոցները, որոնք կարևոր են տվյալ ծրագրի նպատակների հաջող իրականացման համար:

8. Պրակտիկան

Նշել ուսանողների ուսումնական կամ արտադրական պրակտիկաների անցկացման ձևերը և տևողությունը, ինչպես նաև վայրը, որտեղ հնարավոր է կամ նպատակահարմար է դրանց անցկացումը:

9. Շրջանավարտների աշխատանքի հնարավորությունները

Ներկայացնել ծրագրի շրջանավարտների հնարավոր աշխատատեղերի և կարիերայի հնարավորությունները: Եթե ծրագիրը նախատեսված է բավարարելու տեղական կամ միջազգային գործատուների (ձեռնարկությունների, կազմակերպությունների, պետական մարմինների) կոնկրետ պատվերները, այսինքն՝ ներդրվում է նպատակային ձևով, ապա այն հավաստել համապատասխան փաստաթղթերով:

10. Դասախոսական կազմը

Հավաստել, որ առաջարկվող ծրագրի իրականացման համար ուսումնական ստորաբաժանումում առկա է անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական անձնակազմ: Ներկայացնել այն դասախոսների տվյալները, ովքեր պետք է սպասարկեն այդ ծրագիրը:

11. Ուսումնական տարածքներ և լաբորատոր սարքավորումներ

Հիմնավորել, որ ծրագրի իրականացման համար ուսումնական ստորաբաժանումում առկա են անհրաժեշտ ուսումնական և օժանդակ տարածքներ, լաբորատոր և գիտակրթական

անհրաժեշտ սարքավորումներ, կամ դրանք կարող են հատկացվել մինչև ծրագրի պաշտոնական մեկնարկը:

12. Համակարգչային և ուսուցման տեխնիկական միջոցներ

Նկարագրել ստորաբաժանումում առկա համակարգչային բազան և դասավանդման առաջարկվող տեխնիկական միջոցները, որոնք անհրաժեշտ են ծրագրի իրականացման համար: Նշել, թե տեխնիկական ինչպիսի լրացուցիչ (ներառյալ համակարգչային) միջոցներ կպահանջվեն առաջարկվող ծրագրի իրականացման համար, և դրանք ինչպես պետք է ձեռք բերվեն:

13. Գրադարանային և տեղեկատվական այլ աղբյուրներ

Նշել, թե մասնագիտական ինչպիսի գրականություն, ուսումնամեթոդական ու տեղեկատվական նյութեր (տպագիր կամ էլեկտրոնային) են առկա ՀՊՄՀ գրադարանում և ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանումում, և ինչ նոր նյութեր ձեռք բերելու կամ մշակելու անհրաժեշտություն կա:

Ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավար՝

Անդամներ՝

Հավելված 2.

Կ Ա Ր Գ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ) ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման ենթակա ծրագրեր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Նման որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա:

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպականիրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, հարկ վճարողի հաշվառման համարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի (սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) իրավաբանական անձի կանոնադրության պատճենը.

3) պետական գրանցման վկայականի պատճենը.

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է պրոֆեսորադասախոսական կազմի անդամների անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, գիտական աստիճանը կամ կոչումը, պաշտոնը, առարկան՝ որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական) (ձև N 2).

6) տեղեկանք բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների, այդ թվում՝ լսարանային, լաբորատոր, արհեստանոցային, առարկայական կաբինետային, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիաների, օժանդակ (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) տեղեկանք ուսումնական և արտադրական պրակտիկաների բազաներով ապահովվածության վերաբերյալ.

9) կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսումնական պլանը, առարկայական ծրագրերի ցանկը.

10) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգերը.

11) տեղեկանք օտարերկրյա ուսանողների ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման պայմանների ապահովվածության վերաբերյալ (այդ թվում՝ նախապատրաստական բաժինների, դեկանատների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների և համապատասխան մասնագետների առկայության վերաբերյալ).

12) կրթական ծրագրեր իրականացնելու վայրում հսկիչ-դրամարկղային մեքենա գրանցված լինելու և նախորդ օրացուցային տարվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը չապահովելու հիմքով պայմանավորված իրավաբանական անձի գործունեությունը 10 օրով կասեցված չլինելու մասին հարկային մարմինների կողմից տրված տեղեկանքը:

7. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) իրավաբանական անձի կանոնադրության համապատասխանությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով ուսումնական հաստատության կանոնադրության համար սահմանված պահանջներին.

2) հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի պահանջի մասով՝ պրոֆեսորադասախոսական կազմի համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի

հրամանով հաստատված պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջներին, հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր, 50%-ն ունի պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան և (կամ) կոչում, այդ թվում՝ յուրաքանչյուր մասնագիտության մասնագիտական առարկաների գծով՝ 3-ը.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիայի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի սարքերով, սարքավորումներով, նյութերով, գույքով հագեցվածության համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավար կրթության կարգին համապատասխան՝ ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային և կապի այլ միջոցների, անհրաժեշտ սարքավորումների առկայությունը.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևի, ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերի համապատասխանությունը բարձրագույն մասնագիտական կրթական պետական ընդհանուր և մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջներին,

բ. սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների և մագիստրական թեզի պաշտպանության կարգերի համապատասխանությունը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին,

գ. օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը (այդ թվում՝ նախապատրաստական բաժիններում) նախատեսված է կանոնադրությամբ և ուսուցման կարգի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում օտարեկրյա քաղաքացիների ուսուցման կարգին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ըստ սովորողների համակազմի գեղարվեստական, մասնագիտական, գրադարանային-տեղեկատվական և այլ գրականության հագեցվածության համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին.

6) ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի մասով՝ բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների քանակի նշումով) առկայությունը.

7) կրթական ծրագրեր իրականացնելու վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը:

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումը իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

Ձև N 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

_____ -ին

_____ - ից

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____

(հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

_____

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

Հ Ա Յ Տ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

Հ/Հ	Դասիչը	Մասնագիտությունը	Կրթության ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի				Ուսուցման լեզուն	Ուսուցման ձևը	Ուսուցման ավարտին տրվող որակավորումը	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը
				1	2	3	4					

Կ.Տ.

_____ _____ __ թ.

Դիմող՝ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 2

_____ _____ թ.

_____
(կազմակերպության անվանումը, գործունեության տեսակը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Կ.Տ.

Տնօրեն (ռեկտոր) _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Հ/Հ	Անունը, ազգանունը	Կրթությունը, ավարտած բուհը	Որակա-վորումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական) մանկավար-ժական	Գիտական աստիճանը կամ կոչումը

Ձև N 3

_____ _____ թ.

Կ.Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՆԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____
(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Լսարան			
Լաբորատորիա			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան-ընթերցասրահ			
Համակարգչային լաբորատորիա			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների ցուցակը.

2) մարզագույքի ցուցակը:

Ձև N 4

_____ _____ թ.

Կ.Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Ռեկտոր _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :